

Արձագանգներ

Յաւարտ այս խանդավառ ճառերուն, Տիար Ստեփան Սրապեան, Նախագահ Իտալիոյ Հայոց Միութեան, Միլանի Հայ Տունի Պատուոյ անդամ հռչակեց երկու վսեմ. Ծիրանաւորները, Ծիր. Քոլոմպոյ եւ Ծիր. Աղաճանեան, Աստուոր Ճամպելլի եւ Գրպժ. Հմայեակ Վրդ. Կէտիկեան՝ Արբաճայր Ս. Ղաղարու:

Ներկաները խանդավառ ծափերով ողջունեցին նոր անդամները:

Հանդէսի փակման, մինչ բոլոր ներկաները կը հիւրասիրուէին ուրախ ժպիտներով, Ծիր. Քոլոմպոյ կը դերէր Ոսկեմատեանին մէջ:

Armeno di affetto, di preghiere, di elezione. Con benedizione di cuore.

Հայ՝ զգացումներով, աղօթքով եւ բնորութեամբ: Սրտագին օրհնութեամբ:



Սղատօնը վերածուած էր փառատօնի, մինչ ուրախ ու խանդավառ մթնոլորտի մէջ բոլոր ներկաները կը փափաքէին մօտենալ երկու Ծիր. Հիւրերուն, որոնք սիրաղեղ ու հայրական խօսքեր ունէին բոլորին եւ քաջալերէին մտածութիւններ կը հաղորդէին, լուսանկարիչներու փայլակներուն տակ:

Սանդավառ յոյսեր, վաղուան արշալոյսին բացուող չքնաղ ծաղիկներ, որոնք խոստումներն են հայ ազգին յաւերժութեան, արտասահմանի մէջ՝ ձուլումի դէմ եռացող պայքարին, կը բողբոջեն բոլորին կուրծքերուն տակ:

Ծափերով մեկնեցան բարձրաստիճան հիւրերը. մինչ Հայերը կարծես չէին ուղեր հեռանալ Հայ Տունէն, ուր անցուցած էին իրենց երջանկալոյս օրերէն մէկը:

Հ. Ն. Տ. Ն.

ՅԻՍՆԱՄԵԱԿԸ ՄԻԼԱՆՈՅԻ ՄԷՋ

Յատկապէս զօրացնելու եմք հոգիին գէնքերը¹:

ԿԱՐԴ. ԳՐ. Պ. ԱՂԱՃԱՆԵԱՆ

Այսօր բացառիկ մեծութեամբ մեծ է հայութիւնը, Զի մէկ է իր կամքին մէջ եւ որոշողութեան, Զորսուկէս միլիոն հայեր, Հայաստանէն Արտասահման, Կ'ոգեկոչեն մէկուկէս միլիոն նահատակուած հայութիւն. Սրահներու եւ եկեղեցիներու մէջ, Մեծ է յուզումը, մեծ՝ խօսքը, գերադրական՝ բազմութիւնը, Զի ամէն մէկ հայու սրտին մէջ, Ներկայ է մէկուկէս միլիոն նահատակուած հայութիւն... Ներկայ է մէկուկէս միլիոն նահատակներու դեմքը նոյնպէս, Հոս են սուրբերը, անապատներու դեմքը, Մտրակներու մոլեգնի՛լը հոգմոտ աւագութիւն մէջ, — Այսօր բացառիկ մեծութեամբ մեծ է հայութիւնը:

Դափնեգարդեալ սրահներու մէջ, Աստուծոյ խորանին առջեւ, Կանգնած են եկեղեցւոյ Պետերը, իրենց շքեղանքին մէջ, Կանգնած՝ հայութիւնն ամբողջ կողմ կողմի, Ու այս միութիւնը սէրն է, արիւնին ձայնը, կամեցողութիւնը, Որով տկարը կ'ըլլայ հզօր, հզօրը՝ անբեկանելի, Որով երկինքները կը լեցուին աստղերով, Ու անդունդները կը լինին իրենց խաւարը, — Գերյուզեալ բազմութեան վերեւ, քաղցր շնչելէն, Կը լսուի Ամենակալին ձայնը, — Որով Միսիքարիշը կը սփոփէ վշտահարը, — Այսօր բացառիկ մեծութեամբ մեծ է հայութիւնը:

Ամէն սրտի առջեւ բաց են յոյսին համբանները, Հաւատքին սիւները վե՛ր կը բռնեն Միութեան Շէնքը, Այդ Շէնքը յաւետ մնայ ամուր, անխախտելի, Որու մէջ ապրին Սէրն ու Եղբայրութիւնը, Որու պարտեզներուն մէջ, կամարներուն տակ, Գան ոստոստել մեր գաւակները, Ամէն հայ մէկ հայ, ամէն վնիւ մէկ վնիւ, Զի մեռելները մէկ եղան, անապատները նոյնպէս, Ու Ապրիլեան եղեռնը վերածուի Ապրիլեան Արշալոյսի մը, Որու արեգակը չհանչնայ երբեք մայրամուտին մահը, Որպէսզի բացառիկ մեծութեամբ մեծ մնայ հայութիւնը:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

1) Հայկական Տան մէջ արտասանած իր խօսքէն: